ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.07.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Մարգարյանի (լիազորագիր՝ տրված 27.05.2021թ.),

քննելով «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից 08.06.2021թ. ներկայացված (09.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/39 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումներն և պահանջը.</u>

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 08.06.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մայիսի 24-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակվել է ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն և հրավեր հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Հայտերը բացվել

են 02.06.2021թ.-ին և թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել էր, որ չափաբաժին 1-ի համար Նովա Թրեյթ, Ստեպ Լոջիկ Յուգ (այսուհետև՝ Բողոքաբեր), Վանդիստ, Փի-Սի էլեկտրոնիկա ՍՊԸ-ներ հայտերը 1.1. հավելվածում շտկման կարիք ունեն: ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ընթացակարգի ծածկագրով գնահատող հանձնաժողովի հրապարակված թիվ 3 արձանագրության և գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու հայտարարության համաձայն՝ «Վանդիստ» ՍՊԸ (այսուհետև նաև՝ Ընկերություն) ճանաչվել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից այն դեպքում, երբ Ընկերության ներկայացրած թիվ 1.1 Հավելվածի 03.06.2021թ.-ին ներկայացված շտկված տարբերակում առկա են մի շարք անհամապատասխանություններ Հրավերի պահանջներին, մասնավորապես տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Բողոքաբերը չի ընդունում հանձնաժողովի որոշումը՝ դրա ոչ իրավաչափ լինելու հիմքով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 46-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածների պահանջներով, ներկայացնում ենք սույն բողոքը.

<u>Բողոքի փաստական հիմքերը</u>.

1.Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան հիմնադրամի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպվել է ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու համար հայտ է ներկայացվել նաև «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից:

2.ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ընթացակարգի ծածկագրով գնանշման հարցման հայտարարությունը և հրավերը հրապարակվել է սույն թվականի մայիսի 24-ին : Վկայակոչված հանգամանքը հավաստվում է www.gnumner.am կայքից կատարած համապատասխան արտատպմամբ:

3.Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը բացվել են 02.06.2021թ.-ին:

4.02.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ հանձնաժողովը որոշել էր մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները 1.1 Հավելվածում 1-ին չափաբաժնի համար հայտեր ներկայացրած մասնակիցներին, այդ թվում «Վանդիստ» ՍՊԸ-ին:

5.Ընկերության կողմից ներկայացված թիվ 1.1 Հավելվածից, մասնավորապես 1-ին չափաբաժնի մասով «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը», «արտադրողի

անվանումը», «տեխնիկական բնութագրերը» սյունակներից ակնհայտ է, որ ընկերության ներկայացրած հայտը չի բավարարում Հրավերի պահանջներին, մասնավորապես.

- Հրավերի թիվ 1 Հավելվածի «անվանումը» սյունակում նշված է Համակարգիչ Սերվեր, այլ ոչ թե Համակարգիչ, ինչպես ամրագրված է 03.06.2021թ.-ին Ընկերության կողմից ներկայացված թիվ 1.1 Հավելվածի «ֆիրմային անվանումը» սյունակում;
- Ընկերության թիվ 1.1 Հավելվածի «ֆիրմային անվանում» սյունակի 2 կետում նշված է Սերվեր, Ցանցային պահոց, որը չի համապատասխանում հրավերի թիվ 1 Հավելվածին, քանզի այնտեղ նշված է միայն Ցանցային պահոց;
- նույն 1.1 Հավելվածի «ապրանքային նշանը» սյունակում 3-րդ կետում նշված HPE ոչ թե ապրանքային նշանն է, այլ արտադրողի անվանումը (հավաստվում է համապատասխան կայքից կատարված արտատպմամբ);
- «արտադրողի անվանումը» սյունակում HP Inc. արտադրողի նշումը սխալ է 4-րդ կետի՝ ցանցային պահարանի համար, քանզի 2015թվականից հետո ցանցային պահարաններ արտադրում է հենց HPE ընկերությունը, իսկ HP Inc. շարունակում է զբաղվել միմիայն համակարգիչների և տպիչների վաճառքով (հավաստվում է կից ներկայացված արտատպումից): Ավելին Aruba Instant On 1930 (JL685A) մակնիշի արտադրող է հանդիսանում հենց HPE, այլ ոչ թե HP Inc. ;
- տեխնիկական բնութագրեր սյունակում սնուցման բլոկը նշված է 2x700Վտ արագ փոխարինվող այն դեպքում, երբ հրավերի թիվ 1 Հավելվածում այն հստակ ամրագրված է սնուցման բլոկը 2x700Վտ արագ փոխարինվող:

6.04.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով ամրագրվել է, որ Ընկերությունը 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել և ճանաչվել ընտրված մասնակից այն դեպքում, երբ վերջինիս կողմից ներկայացված թիվ 1.1 Հավելվածը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին:

7.Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Հրավերի 4-րդ կետի 4.3 ենթակետի, 8.2, 8.10 կետերի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, 41-րդ կետի,Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները</u>՝

Պատվիրատուն Ընկերության հայտը Հրավերին համապատասխան համարելով և այն չմերժելով թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք)

համապատասխան դրույթների սխալ մեկնաբանության, չկիրառման և խախտման արդյունք է, մասնավորապես.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Նույն Կարգի 41-րդ կետում սահմանված է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն

օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասը նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 8.2 կետի 2-րդ պարբերության համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Հրավերի 8.10 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 4-րդ կետի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական

նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ

Պատվիրատուի կողմից 02.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ՝ հայտերի բացման ժամանակ արձանագրվել է, որ 1-ին չափաբաժնի մասով հայտեր ներկայացրած մասնակիցների 1.1 Հավելվածի շտկման կարիք է առկա և այդ շտկման իրականացման նպատակով կասեցվել էր նիստը և տրամադրվել համապատասխան ժամանակ այն կատարելու համար: Ընկերության կողմից 03.06.2021թ.-ին ներկայացվել է շտկում թիվ 1.1 Հավելվածի, որը Պատվիրատուի կողմից գնահատվել է Հրավերի պահանջներին համապատասխան այն դեպքում, երբ՝

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի՝ «Համակարգիչ Սերվեր, Ցանցային պահոց, Ցանցային միավորիչ, Ցանցային պահարան» տեխնիկական բնութագիրը հետևյալ տեսքով՝

Հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Համակարգիչ Սերվեր, Ցանցային պահոց, Ցանցային միավորիչ, Ցանցային պահարան	Մայրական տպասալը (MB)՝ ապահովում է 12 DIMM slots պրոցեսորի համար, 6 ուղի պրոցեսորի համար, ամեն ուղու համար 2 DIMMs (24 DIMM Slots) հիշողություն, ներքին պահոցների համար 8 SFF SAS/SATA HDD Bays: Կենտրոնական պրոցեսորը (CPU)՝ Xeon Silver 4210 2.2 ԳՀց 10-Core, Hyper- Threading, 2 UPI, 2S, 14MB Cache, 10 ՄԲ, 85Վտ, Օպերատիվ հիշողություն (RAM)՝ 128ԳԲ, RDIMM Dual Rank, SSD կուտակիչ՝ 2x960ԳԲ SATA3- 6G Read Intensive SFF(Small Form Factor), Կոշտ սկավառակ (HDD)՝ 4x2.4 ՏԲ SAS 12G Enterprise 10K SFF (2.5in), Կուտակիչի փոխակերպիչ (Storage Controller) Smart Array P408i-a/2ԳԲ SR Controller (RAID 0/1/1+0/5/5+0) Ցանցային քարտ՝ Ethernet 1Գբ 331i Ethernet Adapter, 4 Ports per controller, Ցանցային քարտ՝ Ethernet 10Գբ 2-

		Port 560SFP+ Adapter, Սնուցման բլոկը 2x500 Վտ արագ փոխարինվող, Չևաչափը՝ 2U ղարակաշար (2U Rack): Սերվերային պահարանի մեջ տեղադրումով: Ցանցային պահոց՝ Կենտրոնական պրոցեսորը (CPU) մին. 2.4ԳՀg, Turbo Boost up to 2.7ԳՀg, Օպերատիվ հիշողություն (RAM)՝ 8 ԳԲ DDR4 ECC UDIMM, Կոշտ սկավառակ (HDD)՝ 2x4ՏԲ 6ԳԲ SATA, Ցանց՝ 4x1Գբ-E (RJ45), Ցանցային արձանագրություն՝ SMB, AFP, NFS, FTP, WebDAV, CalDAV, iSCSI, Telnet, SSH, SNMP, VPN (PPTP, OpenVPN ™ կամ համարժեք, L2TP), RAID-ի տիպերը՝ Basic, JBOD, RAID 0, RAID 1, RAID 5, RAID 6, RAID 10, RAID F1, Լրացուցիչ տվյալներ՝Security Firewall, encrypted shared folder, SMB encryption, FTP over SSL/TLS, SFTP, rsync over SSH, login auto block, Let's Encrypt support, HTTPS, Չևաչափը՝ 2U ղարակաշար (2U Rack) Սերվերային պահարանի մեջ տեղադրումով: Ցանցային միավորիչ 48 պորտանի Գիգաբիթ ցանցային միավորիչ (48) RJ-45 10/100/1000 պորտեր (4) SFP 100/1000 Մբ պորտեր, հիշողություն SDRAM 512ՄԲ, պրոցեսոր 800ՄՀg, Network Cabinet 42U, Rail Kit Mounted, կամ համարժեք տեղադրումով Երաշխիքային ժամկետը՝ 1 տարի, որը սպասարկվում է Հայաստանում գործող արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոններում:

Ընկերությունը ծանուցվել էր թիվ 1.1 հավելվածի շտկման վերաբերյալ: «Վանդիստ» ՍՊԸ-ն հայտի 1.1 Հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է շտկված տարբերակը հետևյալ տեսքով՝

Չ/հ	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

1	1.Համակարգիչ	1.Dell	PowerEdge	DELL	Մայրական տպասսալը (MB)՝ ապահովում է 12 DIMM slots պրոցեսորի համար, 6 ուղի պրոցեսորի համար,
	2.Սերվեր, Ցանցային պահոց,	PowerEdge	R740XD, 210-AKZR_2x4214R_AM/dh	INC	ամեն ուղու համար 2 DIMMs (24 DIMM Slots) հիշողություն, ներքին պահոցների համար 8 SFF SAS/SATA HDD Bays: Կենտրոնական պրոցեսորը (CPU)՝ Xeon Silver 4210 2.2 ԳՀg 10-Core, Hyper- Threading, 2 UPI, 2S, 14MB Cache, 10 ՄԲ, 85Վտ, Օպերատիվ հիշողություն (RAM)՝ 128ԳԲ, RDIMM Dual Rank, SSD կուտակիչ՝ 2x960ԳԲ SATA3- 6G Read Intensive SFF(Small Form Factor), Կոշտ սկավառակ (HDD)՝ 4x2.4 ՏԲ SAS 12G Enterprise 10K SFF (2.5in), Կուտակիչի փոխակերպիչ (Storage Controller) Smart
	3.Ցանցային միավորիչ,	2. Synology	RS3621 RP xs	Synology inc.	Array P408i-a/2ԳԲ SR Controller (RAID 0/1/1+0/5/5+0) Ցանցային քարտ՝ Ethernet 1Գբ 331i Ethernet Adapter, 4 Ports per controller, Ցանցային քարտ՝ Ethernet 10Գբ 2-Port 560SFP+ Adapter, Սնուցման բլոկը 2x700 Վտ արագ փոխարինվող, Ձևաչափը՝ 2U ղարակաշար (2U Rack): Սերվերային պահարանի մեջ տեղադրումով: Ցանցային պահոց՝ Կենտրոնական պրոցեսորը (CPU) մին. 2.4ԳՀg, Turbo Boost up to 2.7ԳՀg, Օպերատիվ հիշողություն
	4.Ցանցային պահարան	3. HPE	Aruba Instant On 1930 (JL685A)	HP INC	(RAM)՝ 8 ԳԲ DDR4 ECC UDIMM, Կոշտ սկավառակ (HDD)՝ 2x4ՏԲ 6ԳԲ SATA Seagate , Ցանց՝ 4x1Գբ-E (RJ45), Ցանցային արձանագրություն՝ SMB, AFP, NFS, FTP, WebDAV, CalDAV, iSCSI, Telnet, SSH, SNMP, VPN (PPTP, OpenVPN ™ , L2TP), RAID-ի

		4.DAHUA	42u 600x800	Zhejiang Dahua Technology Co., Ltd.	տիպերը՝ Basic, JBOD, RAID 0, RAID 1, RAID 5, RAID 6, RAID 10, RAID F1, Լրացուցիչ տվյալներ՝Security Firewall, encrypted shared folder, SMB encryption, FTP over SSL/TLS, SFTP, rsync over SSH, login auto block, Let's Encrypt support, HTTPS, Չևաչափը՝ 2U դարակաշար (2U Rack) Սերվերային պահարանի մեջ տեղադրումով: Ցանցային միավորիչ 48 պորտանի Գիգաբիթ ցանցային միավորիչ (48) RJ-45 10/100/1000 պորտեր (4) SFP 100/1000 Մբ պորտեր, հիշողություն SDRAM 512ՄԲ, պրոցեսոր 800ՄՀg, Network Cabinet 42U, Rail Kit Mounted, տեղադրումով Երաշխիքային ժամկետը՝ 1 տարի, Հայաստանում գործող արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոններում:

Վկայակոչված աղյուսակների համադրումից ակնհայտ է, որ Ընկերության հայտում շտկման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո ներկայացված թիվ 1.1 Հավելվածում առկա են անհամապատասխանություններ Հրավերի պահանջներին, մասնավորապես՝

«Ֆիրմային անվանում» սյունակում 1-ին կետի մասով- Ընկերությունը նշել է Համակարգիչ՝ համակարգիչ սերվերի փոխարեն: Այսպիսով նշվել է սխալ ապրանք, Հրավերի թիվ 1 Հավելվածում ամրագրված ապրանքի անվանմանը չհամապատասխանող;

«Ապրանքային նշանը» սյունակում 2 կետի մասով- Ընկերությունը նշել է Սերվեր, Ցանցային պահոց՝ ցանցային պահոց փոխարեն: Այսպիսով նշվել է սխալ ապրանք, Հրավերի թիվ 1 Հավելվածում ամրագրված ապրանքի անվանմանը չհամապատասխանող;

«Ապրանքային նշանը» սյունակում 3 կետի մասով- Ընկերության կողմից 3-րդ կետի մասով նշված HPE ոչ թե ապրանքային նշանի անվանումն է, այլև արտադրող ընկերության, այն է Hewlett Packard Enterprise (HPE), որը զբաղվում է Aruba Instant On 1930 (JL685A) արտադրմամբ: Այդ փաստը հավաստվում է կից ներկայացված

փաստաթղթերով և արտատպումներով: Այսպիսով ստացվում է, որ Ընկերության կողմից շտկված 1.1 Հավելվածի «ապրանքային նշանը» սյունակում ապրանքային նշանի փոխարեն նշել են արտադրողի անվանումը:

«Արտադրողի անվանումը» սյունակում 3 կետի մասով- Ընկերությունը ցանցային միավորիչի արտադրող որպես նշել է HP Inc ընկերությանը, որը սխալ է և չի համապատասխանում իրականությանը, քանզի տվյալ 1.1 Հավելվածի «մակնիշ» սյունակում մատնանշված Aruba Instant On 1930 (JL685A) ապրանքի արտադրող է հանդիսանում Hewlett Packard Enterprise (HPE), այլ ոչ թե HP Inc, որը 2015թվականից հետո միայն զբաղվում է համակարգիչների և տպիչների վաճառքով: Այդ մասին են վկայում կից ներկայացված փաստաթղթերը և արտատպումները;

«Տեխնիկական բնութագրեր» սյունակում- Ընկերությունը տեխնիկական բնութագրեր սյունակում սնուցման բլոկի 2x500Վտ փոխարեն նշել է դրանից տարբերվող պարամետր, այն է 2x700Վտ, որը չի համապատասխանում Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ներկայացված պարամետրերին:

Վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից և ներկայացված անհամապատասխանություններից ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովի կողմից պետք է դադարեցվի 04.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ «Վանդիստ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վանդիստ» ՍՊԸ-ն արդեն իսկ ծանուցվել էր թիվ 1.1 Հավելվածում առկա շտկումների վերացման վերաբերյալ համաձայն Կարգի 41-րդ կետի, այդ ծանուցման հիման վրա արդեն իսկ 03.06.2021թ.-ին ներկայացրել է շտկում, որում պահպանվել են անհամապատասխանությունները, ապա վերջինիս հայտը ենթակա է մերժման, իսկ 07.06.2021թ.-ին Տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը 1-ին չափաբաժնի մասով դադարեցման, քանզի վերջինիս ներկայացրած հայտը չի համապատասխանում Հրավերի պահանջներին, իսկ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն որպես հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակցի ճանաչման: Ավելացնենք, որ ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 որոշմամբ համանման հանգամանքներում, արձանագրվել էր, որ եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկում անհամապատասխանությունը, հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Տվյալ

իրավիճակը առկա է վկայակոչված Ընթացակարգի շրջանակում 1-ին չափաբաժնի մասով Ընկերության կողմից ներկայացված հայտի թիվ 1.1 Հավաելվածում առկա անհամապատասխանությունների պարագայում:

Պահանջը՝

Ելնելով այն հանգամանքից, որ գնահատող հանձնաժողովը խախտել է Հրավերի 4-րդ կետի 4.3 ենթակետի, 8.2, 8.10 կետերի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, 41-րդ կետի,Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետով խնդրում ենք՝

Բավարարել բողոքը և պարտավորեցնել ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ՝

1.Ընդունել «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և/կամ մերժելու մասին որոշում, և/կամ դադարեցնել՝ «Վանդիստ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտը բավարար գնահատելու և/կամ ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշումը 1-ին չափաբաժնի մասով;

2.Դադարացնել 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը;

3.Ճանաչել 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին՝ որպես հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցի»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.06.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.06.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Վանդիստ» և «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊ ընկերությունները:

2.«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, մասնավորապես՝ վերջինիս կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված Հավելված 1-ին՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, համապատասխանելու իրավաչափությունը:

3.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը շտկման կարիք ունի, մասնավորապես՝ պետք է նշվի սերվերի փարթ-համարը (part-number), Սերվերի և ցանցային պահոցի բաղադրամասերի փարթ-համարները (part-numbers), եթե կան կամ տրվի մանրամասն նկարագրություն (ցանկալի է նշել բաղադրամասի արտադրողի անվանումը), ուստի վերոհիշյալ մասնակիցներին տրվում է մեկ աշխատանքային օր շտկում ներկայացնելու համար: Այդ իսկ պատճառով հանձնաժողովի նիստը կասեցվում է 1 աշխատանքային օրով»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից շտկումը ստացվել է սահմանված ժամկետում և նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վանդիստ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի 08.06.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:..... Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Վանդիստ» և «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը շտկման կարիք ունի, մասնավորապես՝ պետք է նշվի սերվերի փարթ-համարը (part-number), Սերվերի և ցանցային պահոցի բաղադրամասերի փարթ-համարները (part-numbers), եթե կան կամ տրվի մանրամասն նկարագրություն (ցանկալի է նշել բաղադրամասի արտադրողի անվանումը), ուստի վերոհիշյալ մասնակիցներին տրվում է մեկ աշխատանքային օր շտկում ներկայացնելու համար: Այդ իսկ պատճառով հանձնաժողովի նիստը կասեցվում է 1 աշխատանքային օրով»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից շտկումը ստացվել է սահմանված ժամկետում և նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վանդիստ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի հրավերով Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացված է հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

_____-ն ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09
մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

«Վանդիստ» ՍՊԸ-ն ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտի N 1.1 հավելվածով 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
<< ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 >> ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

«Վանդիստ» ՍՊԸ -ն << ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09 >>ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1	Համակարգիչ Սերվեր, Ցանցային պահոց, Ցանցային միավորիչ, Ցանցային պահարան	***Dell PowerEdge***	***PowerEdge R740XD***	***DELL INC***	*Մայրական փպասալը (MB)՝ ապահովում է 12 DIMM slots պրոցեսորի համար, 6 ուղի պրոցեսորի համար, ամեն ուղու համար 2 DIMMs (24 DIMM Slots) հիշողություն, ներքին պահոցների համար 8 SFF SAS/SATA HDD Bays: Կենտրոնական պրոցեսորը (CPU)՝ Xeon Silver 4210 2.2 ԳՀց 10-Core, Hyper- Threading, 2 UPI, 2S, 14MB Cache, 10 ՄԲ, 85Վտ, Օպերատիվ հիշողություն (RAM)՝ 128ԳԲ, RDIMM Dual Rank, SSD կուպակիչ՝ 2x960ԳԲ SATA3- 6G Read Intensive SFF(Small Form Factor), Կոշտ սկավառակ (HDD)՝ 4x2.4 ՏԲ SAS 12G Enterprise 10K SFF (2.5in), Կուպակիչի փոխակերպիչ (Storage Controller) Smart Array P408i-a/2ԳԲ SR Controller (RAID 0/1/1+0/5/5+0) Ցանցային քարտ՝ Ethernet 1Գբ 331i Ethernet Adapter, 4 Ports per controller, Ցանցային քարտ՝ Ethernet 10Գբ 2-Port 560SFP+ Adapter, Սնուցման բլոկը 2x500 Վտ արագ փոխարինվող, Չևաչափը՝ 2U դարակաշար (2U Rack): Սերվերային պահարանի մեջ տեղադրումով: Ցանցային պահոց՝ Կենտրոնական պրոցեսորը (CPU) մին. 2.4ԳՀց, Turbo Boost up to 2.7ԳՀց, Օպերատիվ հիշողություն (RAM)՝ 8 ԳԲ DDR4 ECC UDIMM, Կոշտ սկավառակ (HDD)՝ 2x4ՏԲ 6ԳԲ SATA, Ցանց՝ 4x1Գբ-E (RJ45), Ցանցային արձանագրություն՝ SMB, AFP, NFS, FTP, WebDAV, CalDAV, iSCSI, Telnet, SSH, SNMP, VPN (PPTP, OpenVPN ™ , L2TP), RAID-ի տիպերը՝ Basic, JBOD, RAID 0, RAID 1, RAID 5, RAID 6, RAID 10, RAID F1, Լրացուցիչ տվյալներ՝Security Firewall, encrypted shared folder, SMB encryption, FTP over SSL/TLS, SFTP, rsync over SSH, login auto block, Let's Encrypt support, HTTPS, Չևաչափը՝ 2U դարակաշար (2U Rack) Սերվերային պահարանի մեջ տեղադրումով: Ցանցային միավորիչ 48 պորտանի Գիգաբիթ ցանցային միավորիչ (48) RJ-45 10/100/1000 պորտեր (4) SFP 100/1000 Մբ պորտեր, հիշողություն SDRAM 512ՄԲ, պրոցեսոր 800ՄՀց, Network Cabinet 42U, Rail Kit Mounted, տեղադրումով Երաշխիքային ժամկետը՝ 1 տարի, Հայաստանում գործող արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոններում:*

Այսպիսով՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, մասնավորապես՝ վերջինիս կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված Հավելված 1-ին՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, համապատասխանելու իրավաչափությունը:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ ուղղված «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, գնահատելուն և արդյունքում արձանագրված անհամապատասխանության մասով շտկման պահանջ ներկայացնելուն, հարկ եմ համարում ընդգծել հետևյալը.

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ընդ որում՝ Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները***, ***սակայն*** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գնահատելով «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, արձանագրել է անհամապատասխանություն*** և վերջինիս ծանուցել է շտկելու միայն հետևյալի մասով. ««Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում, մասնավորապես՝ պետք է նշվի սերվերի փարթ-համարը (part-number), Սերվերի և ցանցային պահոցի բաղադրամասերի փարթ-համարները (part-numbers), եթե կան կամ տրվի մանրամասն նկարագրություն (ցանկալի է նշել բաղադրամասի արտադրողի անվանումը)», մինչդեռ՝ արձանագրում եմ, որ «Վանդիստ» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկվող

ապրանքների «ֆիրմային անվանումներ» սյունակներում չի նշել ապրանքների «ֆիրմային անվանումներ»-ը, որի ներկայացման պահանջը նախատեսվել է Ընթացակարգի հրավերի թիվ 1.1 Հավելվածով, որպիսի պայմաններում Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, սակայն նշված մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վանդիստ» ՍՊԸ-ին շտկում կատարելու պահանջ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում, թույլ է տվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջների խախտում, ուստի գտնում եմ, որ պետք է դադարեցնել «Վանդիստ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և վերջինիս նկատմամբ կիրառել Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը՝ մանրամասն նկարագրելով «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտում հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա բոլոր անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկում է «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված Հավելված 1-ին՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, համապատասխանելու իրավաչափությունը, ապա սույն մասով գտնում եմ, որ «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ին՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրին անդրադառնալը նման պայմաններում իրավաչափ չէ, քանի որ ի սկզբանե «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում չեն արձանագրվել հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա բոլոր անհամապատասխանությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից 08.06.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1.Պարտավորեցնել «ԲՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝

1.1 Դադարեցնել «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

1.2 Դադարեցնել Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**